



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

БИБЛИОТЕКА
ИЧ ИСТИТУТА
ВО ТОЛКОВЕДЕНИИ
Академии Наук
СССР

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ-
ՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄ-
ՆԵՐԸ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ, ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ (ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

902.6

4-25

902.6
4-25

35-к
UA 1099

5 OCT 2011

БИБЛИОТЕКА
ИИ СТИПВУ
ВЪСТОЧНОЕДИННА
Академия Наук
СССР

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Հնագիտական հուշարձանների պահպանություն մասին.

22-ին սեպտեմբերի 1932 թ.

1. Նյութական կուլտուրայի մնացորդները՝ հնագիտական հուշարձանները հանդիսանում են կարևորագույն աղբյուրը՝ ուսումնասիրելու և Մարքս-Լենինյան մեթոդագիտության հիմունքներով վերազնահատելու կուլտուրայի պատմության վողջ անցյալը, այլ և միաժամանակ ներկայանում են խոշորագույն արժեք՝ սպասարկելու սոցիալիստական շինարարության հիմնական կարիքներին՝ յերկրահետախուզական, շինարարական, վոսոդման և այլն:

2. Նյութական կուլտուրայի մնացորդների այսպիսի արժեքավորմամբ և բացատրվում այն բացառիկ ուշադրությունը, վորին արժանացել են հնագիտական հուշարձանները խորհրդային հանրակարգում՝ թե կուսակցության ու իշխանության և թե գիտական հասարակայնության կողմից:

3. Շնորհիվ այդ արժեքավորման և ուշադրության՝ հրնարավոր դարձավ հիմնականում պահպանել այդ հուշարձանները նույնիսկ քաղաքացիական պատերազմի արյունալի տարիներին:

նոտ որերին և ապահովել ապագայի սիստեմատիկ-գիտական ուսումնասիրությունը:

Սակայն չնայած այս ամենին և հակառակ գոյություն ունեցող համապատասխան որենքների ու հրամանների՝

4. Սակավ չեն դեպքեր, յերբ տեղերում վորոշ անգիտակից տարրեր, իսկ յերբեմն նաև հակահեղափոխական շարամիտ անձինք ավերում-վոչնչացնում են այդ հուշարձանները, ոգտագործում իրենց անձնական՝ ընտանեկան-տնտեսական պետքերի համար:

5. Միաժամանակ, դժբախտաբար, գիտական-կուլտուրական այդ արժեքների նկատմամբ կատարվող հանցագործ-վոտնձգությունների հանդեպ տեղական խորհրդային և կոլտնտեսական որգանները թույլ և անպարտաճանաչ են գտնվում և վոչ միայն չեն պայքարում, այլ և մի շարք դեպքերում իրենք իսկ մասնակից և մեղսակից են դառնում այդ հուշարձանների ավերման:

6. Միանգամայն թույլ և պայքարը այդ շարագործությունների դեմ նաև գավառական ու դատական իշխանությունների ներկայացուցիչների կողմից, վորոնք հնազիտական-պատմական հուշարձանների պաշտպանություն խընդրում շոչափելի աշխատանք չեն կատարել:

7. Անցյալի կուլտուրայի մնացորդները այդ ավերածությունների դեմ անհրաժեշտ չափով չի սյայքարում նաև խորհրդային-աշխատավորական հասարակայնությունը և առաջին հերթին լուսավորության ճակատի աշխատավորները և այլն:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահությունը վորոշում Ե.

ԱՌԱՋԱՐԿԵՆԷԼ՝

8. Քաղխորհուրդներին և Շրջգործկոմներին, ինչպես և

տնտեսական-շինարարական հիմնարկություններին ու ձեռնարկություններին՝ ամենալայն կերպով մասսայականացնել պատմական-հնազիտական հուշարձանների կուլտուր-գիտական նշանակությունը, ինչպես և գործնական-քաղաքական արժեքը սոցիալիստական շինարարության բնագավառներում:

9. Նույն այդ հիմնարկություններին, ձեռնարկություններին ու կազմակերպություններին՝ խստիվ հրահանգել իրենց բոլոր տեղական մարմիններին ու ներկայացուցիչներին՝ աչալուրջ հետևել պատմական հնազիտական հուշարձանների անվթար պահպանությունը և պաշտպանությունը, այլ և տրամադրել ՀՍՍՀ կուլտուրայի պատմություն ինստիտուտի ներկայացուցիչներին փոխադրական և այլ բոլոր հնարավորությունները հնազիտական հուշարձանների ուսումնասիրության և պահպանության ասպարեզում:

10. Հողժողկոմատին, կոլտնտիկենտրոնին և Տրակտորկենտրոնին՝ անմիջապես ու խստիվ կարգադրել բոլոր հողբաժավարներին, խորհտնտեսություններին, ՄՏԿ կայաններին, կոլտնտեսություններին և այլ շրջանային ու ստորին ողակներին՝ կոլտնտեսական աշխատավոր մենատնտես և այլն՝ յերբեք ձեռնամուխ չլինել այն հողերին, վորոնք ճանաչված են հնազիտական արժեք ունեցող անձեռմխելի վայրեր, այլ և վճռականորեն արգելել վորեև այլ մասնակի նպատակների համար ոգտագործել պատմա-կուլտուրական հուշարձանները:

11. Լուսժողկոմատին՝ պարտադրել լուսավորության ճակատի իր ցանցի բոլոր հիմնարկություններին ու աշխատավորներին և հատկապես լուսբաժիններին ու գյուղական ուսուցչություններին՝ ստեղծել լայն խորհրդային հասարակայ-



նություն—ակտիվ՝ պատմական-հնագիտական հուշարձանները արժեքավորման ու անվթար պահպանութեան շուրջը:

12. Գերագույն դատարանին, Հանրապետութեան Իստախազութեան և Միլիցիայի գլխավոր վարչութեան՝ հրահանգել բոլոր իրենց կենտրոնական, քաղաքների թե շրջանների որգաններին՝ անխնա պայքարել հիշյալ հուշարձանների ավերածութեան, կողմնակի ոգտագործման, անխնամ պահպանութեան դեմ, անողոքաբար մերկացնել ու հետապնդել մեղավորներին, ցուցադրական կարգով դատել ու խիստ պատժել մեղավորներին:

13. «Խորհրդային Հայաստան»-ին, «Կուլտուրական ֆրոնտ»-ին և մամուլի այլ բոլոր կենտրոնական ու տեղական որգաններին՝ լայնորեն մասսայականացնել կուլտուր-պատմական հուշարձանների արժեքը իդեոլոգիական պայքարի ու սոցիալիստական շինարարութեան ասպարիզում: հրահանգել իր բոլոր ախատակիցներին ու թղթակիցներին՝ հետամտել և մերկացնել այդ հուշարձանների ավերածութեան ու փչացման կոնկրետ դեպքերն ու անմիջական մեղավորներին:

14. Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի նախագահութեան՝ աչալուրջ հետեւել կուլտուր-պատմական-հնագիտական այդ հուշարձանների պահպանութեանը և նրանց վոչնչացման և փչացման դեպքերում անմիջապես դիմել դատական, դատախազական և այլ որգաններին՝ մեղավորներին պատասխանատվութեան յենթարկելու, այլ և միաժամանակ մշակել ու ներկայացնել Կենտգործկոմի նախագահութեանը քննութեան նախադիժ այն բոլոր որենսդրական վարչական միջոցառումները մասին, վորոնք անհրաժեշտ են այդ հուշարձանների պահպանութեան և պաշտպանութեան համար:

15. Կենտգործկոմի Կազմ. Բաժնին՝ մշակել և ուղարկել խորհուրդները գծով և սույն վորոշման հիմունքներով հատուկ շրջաբերական և միաժամանակ ունենալ խիստ հսկողութեան այդ իսկ վորոշման անշեղ գործադրութեան վրա:

ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ
ի տ. Կենտգործկոմի քարտուղար՝ Պ. ՍՏԱՄԲՈՂՅԱՆ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ

ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1932 թ. ոգոստոսի 22 ին

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Հանրապետութեան սահմաններում գտնվող ամեն տեսակի հուշարձան հուշարձան՝ կանգուն, կիսավեր կամ բոլորովին ավերակ, առանձին թե խմբված ձևով, իրենց ամբողջ շրջաններով՝ այսինքն նախկին բնակութեան վայրերը—վանքեր, քաղաքատեղեր, գյուղատեղեր, կերտվածներ՝ լինեն նրանք գետնի յերեսին, թե հողով ծածկված, իրենց նախկին տեղերում, թե առաջուց տեղահան արված, կազմում են պետական սեփականութիւն յեղ պետք է մնան միանգամայն անաղաւթ յեղ անձեռնմխելի:

2. Հնութեանների պահպանութեանը պետական կարեւորագույն մի գործ է, վոր իրականացնում է Լուսավորութեան Ժողովրդական Կոմիսարիատը ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի միջոցով:

3. Հնութեանների ուսումնասիրութեանն ազատ է բոլոր գիտական կազմակերպութեանների և անհատների համար, սակայն առանց վորեւէ փոփոխութեան մտցնելու հրութեանների արտաքին ձեւի և գրութեան մեջ:

4. Վոչ վոր իրավունք հունի առանց Կուլտուրայի Պատ-

մության Ինստիտուտի պատշաճ թույլտվության կատարել վորևե հնության պեղում, նորոգում, վերականգնում կամ տեղափոխում և առհասարակ հնությունների հետ կապ ունեցող վորևե այլ աշխատանք:

5. Խստիվ արգելվում է հնություններն արտահանել, քանդել ու փչացնել և հուշարձանները կամ նրանց բեկորներն իբրև նյութ գործածել նոր շինությունների համար:

6. Հնություններ ունեցող վայրերում կամ նրանց կից տեղերում վորևե հանրագուշ շինություն (ճանապարհներ, կամուրջներ, ջրանցքներ, հասարակական պահեստներ և այլն) կառուցելու դեպքում, ձեռնարկողները պարտավոր են նախորդ ստանալ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի թույլտվությունը:

7. Հնագիտական վայրերը յենթակա չեն հողաբաժանության, այդ վայրերում արգելվում է շինարարական կամ գյուղատնտեսական աշխատանքներ կատարել:

8. Պատահական կերպով հայտարերած հնությունների մասին անհրաժեշտ է անմիջապես հայտնել Կուլտուրայի Պատմության Ինստիտուտին:

9. Հրահանգել բոլոր վարչական մարմիններին և անձանց՝ արթուն հսկողություն ունենալ հնությունների պահպանության վրա:

10. Այս վորոշումը խախտողները յենթարկվում են որինական պատասխանատվության:

11. Հանձնարարել Լուսժողկոմատին՝ այս վորոշումը կիրարկելու մասին հրատարակել համապատասխան հրահանգ:

12. Այս վորոշումը վերացվում է «Հնությունների պահպանության մասին» ՀՍԽՀ ժողկոմխորհի 1923 թ. վորոշումը (ՀՍԽՀ Որ. և Կարգ. ժող. 1923 թ. № 9, հոդ. 18):

Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի նախագահ՝
Ս. ՏԵՐ ԳՍԲՐԻԵԼՅԱՆ
Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի գործերի կառավարիչ՝
Ա. ԹՈՒՄՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՀՍԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ) ՊԱՀ-
ՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 մայիսի 1934 թ.

ՀՍԽՀ Գեներոնական Գործադիր կոմիտեյի 1933 թ հունիսի 2-ի և ժողկոմխորհի «Հնությունների պահպանության մասին» 1932 թ. ոգոստոսի 22-ի վորոշման հիման վրա՝ ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիտեայի արևելքը հրահանգում է.

1. Պատմահնագիտական հուշարձաններ են համարվում անցյալի կուլտուրաների անխտիր բոլոր նյութական մնացորդները, վորոնք պատմության համար ունեն առանձին արժեք: Բոլոր այդ մնացորդները գտնվում են գետնի յերեսին կամ հողով ծածկված, ինչպիսին են՝ հնագույն բնակատեղիներ, քարայրներ, ջրանցքներ, հնագույն կամուրջներ, կրոնական կառուցվածքներ (յեկեղեցի, վանք, մատուռ, ուխտատեղիներ, խաչարձաններ) պաշտվող ծառեր, պորտաքարեր, դամբարաններ, կուրգաններ, գերեզմանոցներ, մեգալիթյան հուշարձաններ (մենհիրներ, կրոմլեխներ և գոլմեններ), քանդակագործության և նկարչության պատմության վերաբերյալ մնացորդներ (Ֆրեսկոներ, վորմանրկարներ, հին յուղաներկ նկարներ, վիմաքանդակներ, բոլոր լեզուներով արձանագրություններ, խաչքարեր, տապանաքարեր, կոթողներ և այլն), ամեն տիպի տնային կահ-կարասիների մնացորդներ (կավից, քարից, մետաղից), անցյալին պատկանող արտադրական գործիքներ (քարից, վոսկրից, մետաղից, փայտից), հին դրամներ, արդուղաբլի իրեր (ուլունքներ, մատանիներ, ապարանջաններ, մանյակ-

ներ, գենքեր, ռազմական կացիւններ, նետեր, աղեղներ, վահաններ, նիզակներ, սրեր և այլն), գրավոր մնացորդներ (ձեռագրեր, ձեռագիր հմայիչներ, արխիվային վավերագրեր և այլն): Հին առևտրական ճանապարհների վերաբերյալ մնացորդներ, քարվանսարաններ և այլն, ընդհանրապես անցյալից մնացած ամեն մի առարկա:

2. Պատմա-հնագիտական արժեք ունեցող բոլոր տեսակի իրերը համարվում են պետական սեփականութուն. այդպիսի իրեր հայտաբերողները, գտնողները կամ ձեռք բերողները պարտավոր են անմիջապես հանձնել պատմական հուշարձանների պահպանութեան շրջ. կոմիտեներին (շրջագործկոմներին կից) կամ նրանց գյուղական բաժիններին (գյուղխորհրդներին կից) և կամ թե Կուլտուրայի Պատմ. Ինստիտուտի նշանակած պահպանութեան տեղական հսկիչներին: Թե հիշյալ մարմինները և թե հսկիչները իրենց հանձնված հնութունների մասին պարտավոր են անմիջապես հայտնել Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտին:

Ծանոթութուն ա)—Հնագիտական արժեք ունեցող իրերի հաջող հավաքումն ապահովելու համար անհրաժեշտ է գործադրել խրախուսական միջոցներ՝ հասարակական գովասանք, պարգևատրում, վարձատրում և այլն:

բ). Ստացված յուրաքանչյուր հնութեան համար ներկայացնողին պետք է տալ համապատասխան ստացական և հավաքված հնութունները կանոնավոր ցուցակագրել հատուկ մատյաններում:

3. Պատմա-հնագիտական հուշարձաններին և իրերին արտահանումը հանրապետութեան սահմաններից դուրս խստիվ արգելվում է:

4. Խստիվ արգելվում է քանդել կամ փչացնել պատմական հուշարձանները կամ նրանց բեկորները, վոչնչացնել նրանց վրա յեղած վիճական արձանագրութունները և ամեն տեսակի քանդակները կամ նկարները:

5. Պատմական յուրաքանչյուր հուշարձան կամ նրանց բեկորները ընկած կամ կանգուն վիճակում պետք է պահպանվեն այն դրութեամբ, ինչպես վոր նրանք գտնվում են. խստիվ արգելվում է նրանց տեղահանումը, տեղից տեղաշարժելը կամ փոխադրելը:

6. ՀՍՍՀ տերիտորիայի վրա հնութուններ յերևան բերելու նպատակով պեղումներ կատարելը, հուշարձանները նորոգելը կամ վերականգնելը, ինչպես առանձին անհատների՝ նույնպես և առանձին գիտնականների կամ գիտական եքսպեդիցիաների կողմից կարող են կատարվել միմիայն Կուլտ. Պատմ. Ինստիտուտի գիտութեամբ և գրավոր թույլտութեամբ:

Ծանոթութուն—Պեղումների համար տրված արտոնագրերը համարվում են չեղյալ՝ նրանց վրա նշանակված ժամկետը լրանալուց հետո:

7. Ամեն տեսակի շինարարութուններին՝ կառուցումներին, փորումներին և ընդհանրապես հողային աշխատանքներին ժամանակ, ում կողմից ել նրանք կատարվելիս լինեն, հնագիտական արժեք ունեցող իրեր յերևան գալու դեպքում (շենքերի հետքեր, հին դամբարաններ, կավե և մետաղյա ամաններ, ամեն տեսակի գործիքներ, հին դրամներ, զարդարանքի իրեր և այլն) հողային աշխատանքների ղեկավարները պարտավոր են անմիջապես դադարեցնել աշխատանքը բացված հուշարձանի տեղում և շտապ հայտնել Կուլտ. Պատմ. Ինստիտուտին կամ պահպանութեան շրջանային կոմիտեին, նրա համապատասխան կարգադրութունն ստանալու համար:

8. Ինչպես հուշարձաններ ունեցող, նույնպես և գետնի յերեսին հուշարձաններ չունեցող բոլոր վայրերում նոր շինարարութունների ձեռնարկելիս (ճանապարհներ, կամուրջներ, ջրանցքներ, գործարաններ, բնակելի շենքեր և այլն)

ձեռնարկող բոլոր կազմակերպությունները կամ հիմնարկները անխտիր պարտավոր են նախապես ստանալ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի համաձայնությունը շինարարությունն սկսելու համար: Բացի դրանից, շինարարություն կատարող որգանները պահում են իրենց հաշվին հատուկ հսկիչներ՝ շինարարությունները ընթացքում յերեվան յեկող հնությունների փչացումները և վոչնչացումները կանխելու համար:

Ծանոթություն.—Հսկիչներ նոր շինարարություններում նշանակում են Կուլտուրայի Պատմության Ինստիտուտը: Հսկիչներն իրենց աշխատանքի համար հաշվետու և պատասխանատու յեն Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի առաջ:

9. Խմբական (մի քանիսը տեղադրությունները իրար մոտ գտնվող) հուշարձաններ ունեցող վայրերը, ինչպես նաև հնադարյան և միջնադարյան ավերակ գյուղատեղերն ու քաղաքատեղերն համարվում են հնագիտական օբյեկտներ, վորտեղ որենքով արգելվում են հողարածանություն և վորտեղ գյուղատնտեսական կամ այլ տեսակի աշխատանք:

Ծանոթություն ա).—Հնադիտական շրջանը վորոշում են Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի և Պահպանություն շրջանային Կոմիտեյի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովը:

բ) Հնագիտական շրջանների հողամասերի ոգտագործումը առանձին զեպքերում թույլատրվում են միմիայն այս ծանոթություն ա. կետում նշված հանձնաժողովի վորոշմամբ:

10. Գոյություն ունեցող որենքներով փակված և փակվող յեկեղեցիների և վանքերի գույքը կազմում են պետական սեփականություն և հնագիտական արժեք ունեցող իրերը անցնում են ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի իրավասություն տակ:

11. Յուրաքանչյուր շրջանի անցյալ պատմությունը

կոնկրետ պատմական նյութերի միջոցով ցուցադրելու, ինչպես նաև շրջաններում այս ու այնտեղ անխնամ թափված հին կառուցվածքներից ընկած բեկորները հավաքելու և խնամքով պահպանելու համար՝ շրջանային կամ յենթաշրջանային կենտրոններում կազմակերպվում են թանգարանահնադարաններ պահպանություն շրջանային կոմիտեների միջոցներով:

Ծանոթություն ա).—Թանգարանահնադարանները կարող են կազմակերպվել նաև դավառագիտական թանգարաններին կից՝ կազմելով նրանց մեկ բաժինը:

բ) Թանգարանահնադարանի համար եքսպոնատներ են ծառայելու շրջանում հավաքված, ինչպես և նոր հայտաբերված հնագիտական իրերը և Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ու Կուլտ-Պատմական Թանգարանի նվիրած եքսպոնատները:

12. Թանգարանային եքսպոնատների հավաքումը պետք է հանձնարարել գործին գիտակ առանձին անձանց՝ ուսուցիչներին, հնությունների հսկիչներին և տեղական կուլտուրական կարող ուժերին, վորոնք այդ աշխատանքը կատարում են Կուլտ. Պատմ. Ինստիտուտի ցուցմունքներով և առանձին զեպքերում նաև անմիջական զեկավարություններ: Անհրաժեշտ են, վոր յուրաքանչյուր հնագիտական իրի նըկատմամբ կատարվի նրա նկարագրությունը՝ վորտեղից և վերցրած (տեղի ճիշտ և պարզ շեվորոշումով), ինչ զիբքով և յեղել ընկած, ինչ խորություն վրա և այլն և ըստ հնարավորություն հանել նաև տեղի և իրի լուսանկարը նրան տեղաշարժելուց առաջ:

13 Հուշարձանների ուսումնասիրությունն ազատ են բոլոր գիտական կազմակերպությունների, ինչպես և առանձին անհատների ու այդ նպատակով կազմված տեղական խմբակները համար, սակայն առանց վորտե փոփոխություն մտցնելու հուշարձանների (հնությունների) արտաքին ձևի և տեղադրության մեջ:

14. Պատմական հուշարձանների պահպանութեան շրջանային կոմիտեն և նրանց գյուղական բաժինները պարտավոր են վերահսկողութեան ունենալ հուշարձանները: Պատմ. Ինստիտուտի նշանակած հնութեանների պահպանութեան տեղական հսկիչները աշխատանքին, հաճախակի լսել նրանց գեղեցուկները հիմնադրամի նիստերում և ամեն կերպ աջակցութեան ցույց տալ նրանց՝ կատարելու հանձնարարած պարտականութեանները:

15 Պատմա-հնագիտական հուշարձանների պահպանութեան շրջանային կոմիտեն և լուսարժինը հուշարձանների պահպանութեան գործը աշխատավորական լայն մասսաների սեփականութեանը դարձնելու և մասսայական կոնսերվացիայի ապահովելու ուղղութեամբ ծավալում են լայն մասսայական-բացատրական աշխատանք, ոգտագործելով դրա համար լուսարժինն յենթակա բոլոր կուլտուրական ուժերը, ներգրավելով պահպանութեան գործում կոմիտեի անդամներին, պրոֆեսորներին, ուսանողներին, աշակերտներին և աշխատավորութեան լայն ակտիվին:

16. Պատմ. հուշարձանների պահպանութեան շրջանային կոմիտեն սույն հրահանգի հիման վրա պարտավոր է կազմել ամեն անգամ իր տարեկան աշխատանքների ծրագիրը, վրի մեկ պատճենը ուղարկում է հուշարձան. Պատմ. Ինստիտուտի հաստատութեան:

17. Այս հրահանգը խախտողները կենթարկվեն դատական պատասխանատվութեան, համաձայն գոյութեան ունեցող օրենքների:

18. Առաջարկվում է հուշարձան. Պատմութեան Ինստիտուտին՝ այս հրահանգը ուղարկել բոլոր համապատասխան մարմիններին ի ղեկավարութեան:

Լուսժողովուհի. ՍՏՏՓԱ.ՅԱՆ
Գործերի կառավարիչ՝ Վ. ՍԱԴՄՅԱՆ

ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԽԵՈՒՈՒԳԻՄԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՈՒՈՐ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ-ՋԵՌՆԱՐԿՆԵՐԻՆ ՅԵՎ ՇՐՋՈՐԹ-ԿՈՄԻՏԵՐԻՆ

15 հունիսի, 1934 թ.

Շինարարութեան հետ կապված հողային աշխատանքները կատարելիս շատ հաճախ յերեւան են բերվում հնութեանը, արվեստին և հեղափոխութեան պատմութեանը վերաբերվող արժեքավոր հուշարձաններ՝ կուրգաններ, գերեզմաններ, արձաններ, ֆրագմենտներ և այլն, վորոնք սովորաբար քանդվում կամ մնում են անհայտ:

Այդ կապակցութեամբ առաջարկվում է խոշոր շինարարութեան և հետախուզական-նախագծային աշխատանքներ կատարող բոլոր հիմնուրկ-ձեռնարկութեաններին՝

1. Կազմակերպել ՀՍՍՀ Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի ղեկավարութեամբ հնագիտական (արխեոլոգիական) հսկողութեան շինարարութեան ամբողջ ընթացքում, ըստ վորում հնագետ-հսկիչին նշանակում է ՀՍՍՀ Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտը:

2. Նախ քան շինարարութեան սկսելը շինարարութեան կատարող հիմնարկութեանը պարտավոր է շինարարութեան սկսելուց 2 շաբաթ առաջ իրօզեկ դարձնել հուշարձան. Պատմ. Ինստիտուտին՝ հողամասի նախնական արխեոլոգիական և գիտա-հետազոտական ուսումնասիրութեան կատարելու համար:

3. Բոլոր տեսակի արխեոլոգիական պեղումները, վորոնք անհրաժեշտ կհամարվեն Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի գիտական հանձնաժողովի կողմից՝ կատարելու շին. վայրում, պետք է կատարել ավյալ շին. հիմնարկի բանվորական ուժերով:

4. Բոլոր ծախքերը, վորոնք կապված են արխեոլոգիական հսկողութեան, գիտա-հետազոտական ուսումնասիրութեան և պեղումների հետ, կատարվում են շինարարութեանը կատարող հիմնարկութեան հաշվին:

Վերոհիշյալ աշխատանքների կազմակերպման համար շինարարութեան կատարող հիմնարկութեանը պարտավոր է հատուկ պայմանագիր կնքել ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի հետ շինարարութեանն սկսելուց յերկու ամիս առաջ:

Ժողովուրդի նախագահի տեղակալ՝ ՅԵՐՁՆԿՅԱՆ
Ժողովուրդի գործերի կառավարիչ՝ ԹՈՔՄԱՋՅԱՆ

ՀՍԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ԳԵՐ. ԴԱՏԱՐԱՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁՍՆՆԵՐԸ ՎՈՉՆՁՍՅ-
ՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՐՃ ԺԱՄՆԱԿՈՒՄ
ՅՈՒՅԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՈՂՈՐ ՇՐՋ. ՅԵՎ ՔԱՂ. ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻՆ, ԺՈՂԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Մայիս, 1934 թ.

Ինչպես պարզվում է Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի 1934 թ. մայիսի 17-ի № 265 գրութեանից, մի շարք շրջանային դատարաններ հուշարձանների փչացման և վոչնչացման գործերի քննութեան ժամանակ դատական

պրոցեսներում աշխատավորական լայն զանգվածները ուշադրութեանը հուշարձանների պահպանութեան շուրջը մոբիլիզացիայի չեն յենթարկում:

Վերոհիշյալի հիման վրա Արդժողկոմատն ու Գերագույն Դատարանը առաջարկում են՝ հուշարձանների փչացման ու վոչնչացման գործերը լսել 10 որվա ընթացքում և կարևոր գործերին տալ ցուցադրական բնույթ:

Արդժողկոմ յեւ հանր. դատախազ՝ Պ. ԹՈՐՈՍՅԱՆ
Գերագույն դատարանի նախագահ՝ Ա. ՔԵԹԻԿՅԱՆ

ՀՍԽՀ ՊԵՏՊԼԱՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

ԲՈՂՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ

14 մայիս, 1934 թ.

Հայաստանի ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում տարվում են խոշոր շինարարական աշխատանքներ: Այդ աշխատանքների ընթացքում (առանձնապէս հողային աշխատանքներում) հաճախ յերևան են գալիս արժեքավոր հնութեաններ՝ տնտեսութեան զարգացման, գեղարվեստի, հեղափոխութեանների պատմութեան և ընդհանրապէս մարդկային հասարակութեանների կուլտուրաների վերաբերյալ: Այդպիսի արժեքավոր իրերը հաճախ անուշադրութեան են մատնվում և փչացվում:

Յեւնելով դրանից՝ ՀՍԽՀ Պետպլանը խնդրում է բոլոր շինարարական կազմակերպութեաններին, խորհանտեսութեաններին, վորոնց տնօրինութեան տակ կատարվում են խոշոր շինարարութեաններ, և հետախուզական պրոեկտային կազմակերպութեաններին՝ կազմակերպել հնագիտական հատուկ հսկողութեան նոր շինարարութեանների համապատասխան նախահաշիվներում:



գյուղատեղեր, զանազան շենքերի մնացորդներ, քառե, վաղերե, բրնձ-
գե, յերկարե գործիքներ, գեներ, զարդարանքներ, հին ամաններ
(ամբողջութեամբ կամ կտրտանքներով և այլն) պետք և
անմիջապէս հայանել շինարարութեան վարչութեան ներկա-
յացուցիչներին կամ՝ Յերևան—Կուլսուրայի Պատմութեան Ինս-
տիտուտին (Կուլսուրայի տուն), շատ պ միջոցներ ձեռք առնելու
դուրս յեկած հուշարձանների պահպանութեան յիվ ուսումնա-
սիրութեան համար:

ՀԱՆՔ Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտը հա-
վատացած է, վոր նոր շինարարութեանների բանվորութեան,
ինժեներատեխնիկական պերսոնալի և վարչութեան լայն
ոժանդակութեամբ հնարավորութեան կռնենա կենսագոր-
ծելու Ինստիտուտի առաջ դրված պատասխանատու գիտա-
կան խնդիրները:

Կուլտուրայի Պատմ. Ինստիտուտի գլխավորը՝ ՀԱՊ. ԶՈՐՅԱՆ

Պատմ. հուշարձ. պահպանութեան բաժնի վարիչ՝ Հ. ԹՈՒՄՅԱՆ

XXII



Հայաստանի Ազգային գրադարան



NL0429386

19024

УД 1

010

20/02. 40/05/01/02

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ФИЛОСОФСКИХ
НАУК
АКАДЕМИИ НАУК
СССР